

ԲԱՂԴԱԴԻ ԵՐԿԱՇՈՒՂՈՒ ՄԱՍԻՆ

Լուրջ, հեղինակաւոր աշխատութիւնները տաճկական Արեւելքի մասին կազմում են արդէն մի պատկառելի գրադարան։ Որքան աւելի է բորբագւում ճգնաժամը, այնքան աւելի է վառւում արեւետեան երկրների մէջ հետաքրքրութիւնը դէպի պայքարող ու մեռնող ժողովութիւնները, և ամեն տարի մեծ թւով գիտնական եւրոպացիներ՝ զինուածի բոլոր յարմարութիւններով, ուղևորւում են դէպի այն տարարախտ, արիւնոտ վայրեր՝ ուսումնասիրելու և տգէտներին էլ ծանօթացնելու։

Անդրէ Շերաղամ' մէկն է այդպիսի տուրիստներից նա այցելել է Պոլիս, Սալոնիկ, Խևլիբեր և Բալկանեան ուրիշ երկրներ։ Տեսնուել է ամեն տեղ ազգեցիկների հետ, ուսումնասիրել է Մակեդոնիայի վիճակը և ուրիշների հետ ինքն էլ եկել է այն եղրակացութեան, որ երկչուառութիւնը չէ կարող ապահովել խաղաղութիւնը (la couardise n'assure pas la paix)։

Գրքի առաջին մասը և մեծագոյնը նույիրուած է Գերմանիայի արևելեան քաղաքականութեանը։ Խնդիրը այրող այժմէութիւն ունի և խորապէս շահագրգռում է հանրային կարծիքը բոլոր երկրներում։

Կարող էք երեակայել, թէ որպիսի յուղմունքով կը խօսէ այդպիսի մի խնդրի մասին մի փրանսիացի, հայրենասէրներին չափազանց անհանգստացնում է Տեսլոնի անընդհատ յառաջնապացութիւնը դէպի Արևելք։

Մոլտէի, տնտեսագէտ Ռոշերի, Ռոբերտուսի և այլոց երազները զրեթէ իրականութիւն են այսօր,—ասում է Շերագամ։ Երեսուն տարի առաջ գերմանացիք ոչինչ էին կ.-Պոլսում, իսկ այսօր Գերմանիան վայելում է այնտեղ ամենամեծ հմագըք։ Գերմանական ազգեցութիւնը մուաք գործեց թիւրքիայում նաև և

առաջ գորքի մէջ, չնորհիւ զլլսաւորապէս Գոլց փաշային, որը բարենորոգեց թիւքքաց զինուորական դպրոցները և մտցրեց սպուտական դիսցիպլին։ Դրա հետ միասին Տաճկաստանը դարձաւ շահաւելտ վաճառանոց գերմանական զէնքերի համար։ Գերմանիայում կամաց-կամաց ժողովրդականութիւն ստացաւ այն միտքը, որ փոքր Ասիան ամենաարդիւնաւելտ և հիւրընկալ վայրն է՝ գերմանական գաղթականութիւն հաստատելու համար։

Եւ ահա պանզերմաննիզմի, համազերմանական տիրապետութեան շամպիոնները հրապարակ հանեցին իրանց ծայրայեղ յաւակնութիւնները և ակումբների ու հրատարակութիւնների մէջ սկսեցին ձառել Գերմանիայի կատարելիք մեծ առաքելութեան մասին՝ Տաճկաստանում։

Վեհինելմ կայսրը քաջալերեց այդ սանձարձակ ախորժակները և կենտրոնացրեց իր ուշքն ու միտքը մերձաւոր արեւելքի վրայ։

Սկսուեց բուռն պրոպագանդ։ Կազմուեցին ընկերութիւններ, Ռւդարկուեցին մարդիկ՝ ուսումնասիրելու նպատակով։ Կայսըրը անձմամբ այցելեց սուլթանին։ Էական ձգտումներ՝ ստանալ վերջինից իրաւունք չարունակելու Անատոլիայի երկաթուղային գիծը, որ արդէն ամբողջապէս Գերմանիայի ձեռքումն էր գտնւում, մինչև Պարսից ծոցը։

Եւ այդ ձգտումն արդէն իրականացած է. Երկաթուղու մի հսկայական զիծ մօտ 3000 կիլոմետր երկարութեամբ պիտի անցնէ հարուստ, արդաւանդ երկրներով և պիտի մի նոր շուկայ բաց անէ գերմանական առների ու արդիւնաբերութեան համար։ Անհաջիւ են այդ մեծ ձեռնարկի տնտեսական և քաղաքական հետեանքները։ Մօտ 10 տարի կը տեէ այդ երկաթուղու շինութիւնը և կը նատէ մօտաւորապէս մէկ միլլիարդ ֆր.։ Վաթուումուհինգ ժամում նա Պոլսից կը տանէ Բաղդադ, այնինչ այսօր նոյն տարածութիւնը անցնելու համար հարկաւոր է 50-55 օր։

Բաղդադի երկաթուղին հաղորդակցութեան նոր զիծ կը բանայ Հնդկաստանի հետ և շատ աւելի կարճ՝ քան այսօրուանը։ Այսօր Վիեննայից Բումբէյ հասնում են 16 $\frac{1}{2}$ օրում (Վիեննայից Տրիեստ՝ $\frac{1}{2}$ օր, Տրիեստից Բումբէյ՝ նաւով 16 օր, նոր զծով նոյն տարածութիւնը կ'անցնեն ընդամենը՝ $9\frac{1}{2}$ օրում (Վիեննա-Սոֆիա-Պոլիս՝ ձեպընթացով—2 օր, Պոլսից՝ Բասսորա և Պարսից Ծոց— $3\frac{1}{2}$ օր, Բասսորապէս՝ Բումբէյ—4 օր նաւով)։

Բաղդադի ապագայ զիծը անցնելու է մի երկրով, որ երբեմն համարւում էր աշխարհի շումարանը (իրաւ է, այդ աշխարհը սահմանափակ էր այդ ժամանակ)։

Լայնատարած հողեր, ուր անբաւ գանձեր են թագնուած, այսօր ընկած են խոպան, անինամ, զուրկ նորագոյն արդիւնագործական բարիքներից: Բայց դեռ գիծը շինելուց յետոյ առնուազը մի 10 տարի պիտի անցնէ, մինչև կը հաստատուի ապահովութիւնն ու խաղաղութիւնը, մինչև կը հիմնեն գործարանները և կը սկսեն շահագործել բնութեան բերքերը: Երկար ժամանակ ուրեմն գերմանացիք շահ չը պիտի ունենան իրանց վիթխարի ձեռնարկից: Քանի դեռ կը շարունակուի ներկայ անիշխանական վիճակը թիւրքիայում, ուր հայ, թիւրք, քեւրդ, արաք ևայլն մշտնջենապէս գրոհ են տալիս իրար դէմ,—չեն կարող նորմալ ու ապահով ընթացք ունենալ ոչ միայն առետուրն ու արդիւնացիւրը, այլ նոյնիսկ երկաթուղային հաղորդակցութիւնը:

Այնթարից Մոսուլ գիծը անցնուամէ քիւրդական հողերով, ուր իշխում են քիւրդ համերդի շեղապետներ: Մոսուլի ու Խարբերդի միջև նոյնպէս քիւրդեր են: Գերմանական հետպատոս Շահմերիի, որ ուղեկցել է հետազօտող միսափային, այն կարծեքն է յայտնում, որ գիծը պահպանելու համար անհրաժեշտ կը լինի դնել երկու գորարանակ:

Թերես, ասում է Շերադամ, Գերմանիան դաշն կապէ սուլթանի հետ՝ իր սեփական վինուուրներով ապահովելու այդ խաղաղութիւնը... Դա արդէն ինքնին կը լինի մի մեծ քայլ քաղաքական տեսակէտից: Սոճասարակ, աւելացնում է հեղինակը, գերմանացոց տիրանալը Բաղդադի գծին՝ իր քաղաքական, զենուորական և առետրական հետեանքներով կը դիմութերես իբրև ամենածանրակշիռ անցքը Եւրոպայում՝ ՖրանսաՊրուսական պատերազմից յետոյ:

Բայցի մշտնջենական անապահովութիւնից՝ կայ և մի ուրիշ հանգամանք, որ մասածել է տալիս Բաղդադի երկաթուղու ձեռնարկողին: Դա Թիւրքիայի ֆինանսական վիճակն է, որից մեծապէս կախումն ունի ձեռնարկի ածող իրագործումը: Քանի որ երկաթուղին անմիջական արդիւնք չը պիտի տայ, քանի որ ահազին տարածութեան վրայ հաղորդակցութիւնը պիտի լինի շատ թոյլ և ցանցառ ու նոմագ ազգաբնակութիւնը նոյնիսկ երկաթուղու շինութիւնից յետոյ էլ պիտի շարունակէ հաղորդակցութեան նախնական ձեռ՝ ուղտերով ու աւանակներով, ապա ուրեմն գիծը գլուխ բերելու համար պէտք է՝ այսպէս ասած՝ մեծ զոհաբերութիւն: Գերամանացիք պահանջում են թիւրք կառավարութիւնից կիրումեարիական երաշխաւորութիւն,—մի սիստեմ, որ արդէն մտցրուած է Եւրոպական Տաճկաստանի մէջ սկսած 1888-ից:

Մօտ 3000 կիլոմետր տարածութեան համար այդ կիլոմե-

արիական երաշխաւորութիւնը հասնում է պատկառելի գումարի,
— 35 միլիոն ֆրանկի տարեկան։ Ո՞րտեղից գտնէ սուլթանի
կառավարութիւնը ներկայ փինանսական ճգնաժամում...

Շերադամ՝ դառնութեամբ շեշտում է, որ Ռուսաստանը,
Անգլիան և Ֆրանսիան կորովի կերպով Շախատեցին արգելք
լինել գերմանական առաջնութեան (hégémonie) հաստատա-
նը արեելքում։ Գերմանիայի յաղթանակները անհանգիստ են
անում բոլոր պետութիւններին։ Անգլիային բնաւ ցանկալի չէ,
որ աշխարհիս առաջին զինուորական և երկրորդ նաւային պե-
տութիւնը ամուր ուաք գնէ Հնդկաստանի դռներին և ընդամենը
10 ժամ՝ տարածութեան վրայ՝ Բերլինից։

Բաղդադի երկաթուղին մահացու հարուած կը հասցնէ
Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի տնտեսական շահերին
և քաղաքական ազգեցութեանը Թիւրքիայում։

M.